Փաստ. անվանումը	Եվրասիա միջազգային համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության կարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-10-01
Հաստատման ամսաթիվը	02/11/2009
Արձանագրության N	03/09-10
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ , Սուրեն Օհանյան
Մշակող	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին
Ներդրման/իրականացման պատասխանատու	Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին

Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
06 փետրվարի 2018	Կատարվել է ոչ հիմնարար փոփոխություն, ավելացվել է առաջին էջը՝ կոդավորման, ներդրման պատասխանատվությունը հստակեցնելու և հետագայում փոփոխությունները կառավարելու նպատակով:	Սուրեն Օհանյան Ռեկտոր

Հաստատված է
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհրդի նիստում
«2» նոյեմբերի 2009թ.
ռեկտոր, պրոֆեսոր _____ Ս.Օհանյան

ԿԱՐԳ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով Եվրասիա միջազգային համալսարանի կանոնադրության հիմնադրույթներին համապատասխան սահմանվում է (այսուհետ՝ համալսարան) ամբիոնների վարիչների ընտրության, նրանց հետ աշխատանքային պայմանագրի կնքման և պաշտոնում հրամանագրման կարգը:

2. Ամբիոնը ֆակուլտետի կառուցվածքային հիմնական ուսումնագիտական ստորաբաժանումն է, որը միավորում է մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում և իրականացնում է ուսումնական գործընթացը, ուսումնամեթոդական, հետազոտական և կազմակերպչական աշխատանքները, բարձրորակ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, նրանց որակավորման բարձրացման և վերաորակավորման գործընթացները:

3. Ամբիոնի իրավասությունները և գործունեության սկզբունքները կարգավորվում են բուհի կանոնադրությամբ, ֆակուլտետի և ամբիոնի կանոնակարգերով: Ամբիոնների գործունեությունը վերահսկվում է դեկանի կողմից:

4. Ամբիոնը ղեկավարում է ամբիոնի վարիչը, որն ընտրվում է գիտխորհրդի նիստում 5 տարի ժամկետով: Ամբիոնի վարիչին պաշտոնում հրամանագրում է համալսարանի ռեկտորը: Ամբիոնի վարիչը, որպես կանոն, պետք է լինի գիտությունների թեկնածու: Ատենախոսության նախնական պաշտպանությունը անցած կամ արդեն պաշտպանած, սակայն դեռևս ԲՈՀ-ի կողմից չհաստատված ամբիոնի վարիչի տեղի համար առաջադրված դասախոսների կարգավիճակը հավասարեցվում է գիտության թեկնածուի կարգավիճակին:

5. Ֆինանսական դժվարությունից, ամբիոնային ցածր բեռնվածությունից և այլն ամբիոնի վարիչը ժամանակավորապես, համաձայն կանոնադրության, կարող է համատեղության կարգով կատարել նաև դեկանի պարտականություններ:

2. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Համալսարանում սահմանվում է ամբիոնի վարիչի պաշտոնատեղի զբաղեցման մրցութային եղանակ:

7. Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղերի մրցույթի վերաբերյալ հայտարարությունը ձևակերպվում է համալսարանի ռեկտորի հրամանով, որը հայտարարվում է համալսարանում և ԶԼՄ-ներում: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, պաշտոնատեղի հավակնորդին ներկայացվող պահանջները և դիմումների ներկայացման ժամկետը՝ հայտարարության հրապարակումից հետո 30 օրվա ընթացքում:

8. Ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման մրցույթին, որպես կանոն, մասնակցում են գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (կոչում) կամ նրանց կարգավիճակին համապատասխանություն ունեցող անձինք: Ամբիոնի վարիչի

պաշտոնատեղի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի ուսումնական մաս են ներկայացնում

- դիմում ռեկտորի անունով,
- կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
- քաղվածք աշխատանքային գրքույկից,
- համառոտ ինքնակենսագրություն,
- գիտական (որակավորման) աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները, կամ ժամանակավոր կարգավիճակի մասին տեղեկանք գիտական խորհրդին,
- տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
- տվյալներ պարգևատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ /եթե այդպիսիք կան/:

9 Պաշտոնատեղի հավակնորդի դիմումը չի ընդունվում, եթե նրա որակավորումը չի բավարարում մրցույթի պայմանները կամ էլ չի պահպանվել դիմումի ներկայացման ժամկետը:

10 Ռեկտորը հավակնորդների գործերը հանձնում է պրոռեկտորին, որը 1 շաբաթվա ընթացքում կազմակերպում է հավակնորդների գործերի քննարկումը, տվյալ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի և ֆակուլտետի նշանակումների հանձնախումբ է ներկայացնում ամբիոնի կարծիքը: Կարծիքում նշվում են հավակնորդի մասնագիտական բնութագիրն ու մանկավարժական գործունեության գնահատականը, ամբիոնի նիստի քվեարկության արդյունքները (փակ կամ բաց՝ ըստ ամբիոնի նիստի որոշման), ամբիոնի վարիչի պաշտոնում հավակնորդին նշանակելու պատճառաբանված հիմնավորումը և պայմանագրի կնքման առաջադրվող ժամկետը:

11 Ամբիոնի վարիչի պաշտոնատեղի համար մեկից ավելի դիմումների առկայության դեպքում ամբիոնի նիստում գործերի քննարկման արդյունքով ամբիոնը կարող է հիմնավորված առաջնություն տալ հավակնորդներից մեկին, որից հետո բոլոր գործերը ներկայացվում են ֆակուլտետի նշանակումների հանձնախմբին:

11.1. Ֆակուլտետի նշանակումների հանձնախմբի եզրակացության հիման վրա, ֆակուլտետի խորհուրդը 2 շաբաթվա ընթացքում քննարկում է ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման հարցը և ընդունում որոշում՝ փակ քվեարկությամբ, ապա մրցույթով անցած և առավելագույն ձայներ հավաքած հավակնորդի թեկնածության վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում գիտխորհուրդ: Մրցույթի անցկացման կարգը և ընթացակարգը սահմանվում են ֆակուլտետի խորհրդի կանոնակարգով:

11.2. Ֆակուլտետի խորհրդի ընդունած որոշումը 1 շաբաթվա ընթացքում քննարկվում է նշանակումների հանձնախմբում և դրական եզրակացության դեպքում ներկայացվում գիտխորհուրդ, որտեղ մեկ ամսվա ընթացքում քննարկվում և փակ քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ ընդունվում է որոշում՝ հավակնորդին ամբիոնի վարիչի պաշտոնում նշանակելու վերաբերյալ ռեկտորին առաջարկություն ներկայացնելու մասին:

13.3 Բացասական եզրակացության գիտխորհրդի որոշման հետ ռեկտորի պատճառաբանված մերժման դեպքում հավակնորդի գործը վերադարձվում է համալսարանի գիտխորհուրդ՝ կրկնակի քննարկման: Գիտխորհրդի ձայների 2/3-ով հավակնորդի հաստատվելու դեպքում համալսարանի ռեկտորը կնքում է աշխատանքային պայմանագիր հավակնորդի հետ և հրամանագրում նրան ամբիոնի վարիչի պաշտոնում: Հավակնորդին ամբիոնի վարիչի պաշտոնում ռեկտորի պատճառաբանված մերժման հետ գիտխորհրդի համաձայնության դեպքում հայտարարվում է ամբիոնի վարիչի թափուր տեղի համար նոր մրցույթ:

14. Ամբիոնների միացումից կազմավորված նոր ամբիոնի վարիչի պաշտոնում մրցույթ հայտարարելու կամ ամբիոնների վարիչներից մեկին նշանակելու որոշումը կայացնում է համալսարանի գիտխորհուրդը փակ քվեարկությամբ:

15. Ամբիոնների բաժանման դեպքում ամբիոնի վարիչը համալսարանի ռեկտորի հրամանով նշանակվում է կազմավորված նոր ամբիոններից մեկի վարիչի պաշտոնում,

իսկ մյուս ամբիոնի վարիչի պաշտոնի տեղակալման համար հայտարարվում է մրցույթ՝ համաձայն սույն կարգի II բաժնի դրույթների:

16. Պաշտոնավարումը շարունակելու դեպքում ամբիոնի վարիչը պահպանում է իր կարգավիճակը մինչև նախկին պայմանագրով սահմանված ժամկետի ավարտը:

17. Առանձնահատուկ դեպքերում (նոր ստեղծվող ամբիոն, ամբիոնի վարիչի պաշտոնի թեկնածության բացակայություն, կրկնակի մրցույթի բացասական արդյունք և այլն) համալսարանի ռեկտորն իրավասու է մինչև 1 տարի ժամկետով ամբիոնի վարիչի պաշտոնում հրամանագրել տվյալ կամ այլ բուհի՝ սույն կարգի 8-րդ կետի պահանջները բավարարող մասնագետի և հրամանագրման ժամկետի ավարտին կազմակերպել ամբիոնի վարիչի ընտրության նոր գործընթաց:

3. ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

18. Ամբիոնի վարիչի պաշտոնում մրցույթով անցած անձի հետ համալսարանի ռեկտորը 5 տարով կնքում է աշխատանքային պայմանագիր և նրան հրամանագրում ամբիոնի վարիչի պաշտոնում:

19. Ամբիոնի վարիչը կանոնադրությամբ սահմանված կարգով կարող է միաժամանակ երկու պաշտոն զբաղեցնել:

20. Աշխատանքային պայմանագրում նշված պաշտոնավարման ժամկետը լրանալու և նոր պայմանագիր չկնքելու, ինչպես նաև ամբիոնի վարիչի պաշտոնավարման՝ սույն կարգի 5-րդ կետով հաստատագրված առավելագույն ժամկետը լրանալու կապակցությամբ համալսարանի ռեկտորը, օրենքով սահմանված կարգով, պայմանագրում նշված ժամկետի ավարտից 2 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում է ամբիոնի վարիչին և նշանակում ամբիոնի վարիչի նոր ընտրություններ՝ սույն կարգով սահմանված ընթացակարգով:

21. Աշխատանքային պայմանագիրը կարող է դադարեցվել կամ վաղաժամկետ լուծարվել ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ կամ կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ այլ պատճառներով: Աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ լուծարելու որոշման մասին կողմերը միմյանց իրազեկ են պահում 2 ամիս առաջ՝ պարզաբանելով որոշումն ընդունելու պատճառները, որից հետո համալսարանի ռեկտորը նշանակում է ամբիոնի վարիչի նոր ընտրություններ՝ սույն կարգով սահմանված ընթացակարգով: